



Միջազգային Հայագիտական Մագիստրոսական ծրագիր (IMAS)

Դասընթացի պատասխանատու : Փրոֆ. Անահիտ Տոնապետեան-Տեմոխուկոս

Contact : master.international@etudes-armeniennes.org

2026-2027

21/09/2026 թվականի, ոչ պարտադրյալ գրքով
Մինչև վերամուտ փոփոխության ենթակա

imUS

International Master in Armenian Studies

Ἰνάλκο แห่งชาติ Լեզու সভ্যতা ԶԼԷ
i n a l c o

Բովանդակություն

Ընդհանուր Ներկայացում	3
ԻՆՎԼԵՍՏ	3
Հայագիտությունը Ինսթիտյի մեջ	3
Ուսուցչական անձնակազմ	4
Հայագիտական Միջազգային Մագիստրոսական ծրագիր (IMAS)	5
Թեկնածություն եւ արձանագրություն	5
Բ տարուան (M2) ընդունման համար`	6
Արձանագրության գործընթացը (երկու փուլով)	6
IMAS ՄաստերԷն Ետք ասպարեզի կարելիություններ	7
Գործնական տեղեկություն	7
Բաժանմունքի քարտուղարություն	7
IMAS-ի ուսուցման պայմաններ	8
Համալսարանական ժամանակացույց	8
Հայագիտության հետ առնչուող կրթաթոշակներ	8
Հանրակացարան	8
Գործնական յղումներ	8
Դասընթացի կառույցը	9

Ընդհանուր Ներկայացում

ԻՆԱԼԲՕ

ԻՆԱԼԲՕՆ պետական համալսարանական (կրթական եւ հետազոտական բարձրագույն հաստատություն) մըն է, որ կը յաջորդէ 1795-ին հիմնուած Ecole Spéciale des Langues Orientales Vivantes-ին, ուր հայերէնը կը դասաւանդուի 1798-էն ի վեր: Այսօր ան Եւրոպայի եւ անկէ դուրս հազուադէպ համալսարաններէն է, ուր կը դասաւանդուին արեւելքի լեզուներ եւ մշակոյթներ (աւելի քան հարիւր լեզու): ԻՆԱԼԲՕՆ անդամ է EUnivWell եւրոպական համալսարաններու ցանցին, Ֆրանսախօս համալսարաններու գործակալութեան (Agence Universitaire de la Francophonie) եւ Erasmus+ ցանցին, եւ բազմաթիւ գիտական համագործակցութիւններ ունի, մասնաւորաբար CNRS-ի եւ աշխարհի տարբեր համալսարաններու հետ:

Ինալբօն կը շնորհէ պետութեան կողմէ ճանչցուած բոլոր վկայականները (Licence, Master, Doctorat), որոնք, համապատասխանելով եւրոպական չափանիշներու, թոյլ կու տան Ինալբօնի շնորհած ECTS վարկանիշերը (credits) արժեւորել եւրոպական բարձրագոյն կրթութեան համակարգի որեւէ երկրի մէջ:

Արեւելեան լեզուներու եւ քաղաքարթութեանց հիմնարկ (INALCO)

[Pôle des Langues et Civilisations](#)

65 rue des Grands Moulins, 75013 Paris

Հեռ. +33 (0)1 81 70 10 00.

ճամբայ՝ Մէթրօ գիծ թիւ 14 կամ RER C, կայան՝ « Bibliothèque François Mitterrand » ; օթոպիւս 89 եւ 62, կանգառ « Bibliothèque Rue Mann » ; հանրակառք (tram) 3a, կանգառ՝ « Avenue de France ».

Ինալբօնի հետազոտութեանց կեդրոն (Maison de la Recherche)

2 rue de Lille, 75007 Paris

ճամբայ՝ Մէթրօ գիծ 1 կամ 7, կայան « Palais-Royal – Musée du Louvre », գիծ 4, կայան « Saint Germain-des-Prés », գիծ 12, կայան « Rue du Bac », RER C կայան « Musée d'Orsay » ; օթոպիւս 24, 27, 39, 68, 69, 95 - կանգառ Pont du Carrousel

<https://www.inalco.fr>

Հայագիտութիւնը Ինալբօնի մէջ

Ինալբօնի հայագիտական բաժանմունքը կ'առաջարկէ Հայաստանէն դուրս աշխարհի լայնագոյն հայագիտական ծրագիրը, ըստ ընդգրկուած գիտակարգերուն (լեզու, լեզուաբանութիւն, հին, միջնադարեան, արդի եւ ժամանակակից պատմութիւն, արուեստի պատմութիւն, ընկերբանութիւն-մարդաբանութիւն, գրականութիւն եւ թարգմանութիւն) եւ աստիճաններուն (Bachelor/Licence-էն սկսելով մինչեւ հայագիտական PhD/doctorat): Կ'ընդունուին հայերէնի մէջ սկսնակներ, ինչպէս նաեւ զանազան աստիճանի հայախօս ուսանողներ: Ինալբօնի վկայականները կը ներառեն հետազոտական եւ/կամ արհեստավարժական ասպարեզի պատրաստութիւն:

Միջազգային առցանց Մագիստրոսական ծրագիրը ծագեցաւ Նկատի առնելով բարձր հայագիտական վկայական ստանալու պահանջը Սփիւռքի զանազան երկիրներու մէջ, նաեւ ոչ-ֆրանսախօս ուսանողներու կողմէ: Ամբողջ աշխարհի ուսանողներու մատչելի կը դարձնէ ճանաչում վայելող անձնակազմին հմուտութիւններն ու փորձառութիւնը: Եզակի միջավայր մը կը ստեղծէ, ուր հայախօս ուսանողներ արեւմտահայերէն լեզուով մտային եւ արհեստավարժական գործունեութիւն վարելու առիթը կը գտնեն միջազգային դասարանէ մը ներս:

IMAS ծրագիրը կը ներառէ 2017-էն ի վեր գոյութիւն ունեցող դասեր, որ մաս կը կազմեն Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկին հետ համագործակցութեամբ ստեղծուած **Արեւմտահայերէնի ուսուցում սփիւռքի մէջ** յատուկ վկայականին (DLC4-30 credits) եւ թոյլ կու տայ այս միաւորները արժեւորելու որպէս աւելի աշբողջական (Master-120 credits) ծրագրի ենթամաս:

Ուսուցչական անձնակազմ

Ինալքոյի մշտական դասախօսներ

[Անահիտ Տոնապետեան-Տեմոփոլոս](#) Full Professor, Doctor of Linguistics (հայերենի լեզուաբանություն, մասնագիտության պատասխանատու)

[Վիկտորիա Խուրշուդեան](#), Associate Professor, Doctor of Linguistics (արեւելահայերեն եւ լեզուաբանություն)

[Մելանի Գըճեան](#), Certified Teacher (արեւմտահայերեն)

[Աննա Լէյոյեան](#), Associate Professor, Doctor of Art History (Ռուսիոյ եւ Կովկասի Արուեստ Arts, Eurasia and Russia departments)

[Թային Տէր Մինասեան](#), Full Professor, Doctor of History (Ռուսիոյ եւ Կովկասի քաղաքական եւ ընկերային պատմություն, Eurasia and Russia departments)

Հայագիտական բաժնի դասատուներ

[Քրիստինա Բատիկեան](#), Հայ գրականություն, ստեղծագործ գրություն եւ ընթերցում

[Նազր Թեմիր-Պէյլերեան](#), Doctor of Sociology (ընկերբանություն-մարդաբանություն)

[Սամուէլ Զաքարթեան](#), PhD student, Armenian linguistics

[Փաթրիսիա Պուասոն](#), Doctor of History (հին եւ միջնադարեան պատմություն)

[Էլոտի Կավրիով](#), Doctor of History (խոր եւ ժամանակակից պատմություն)

[Ազնէս Ուզունեան](#), Doctor of Linguistics, Ինալքո/Institut Catholique de Paris (Գրաբար)

Միջազգային Մաստերին կցուած դասախօսներ

[Վայէնթինա Գալցոյարի](#) Ժընէվի Համալսարանի Հայագիտության ամպիոնի տնօրէն, դասական բանասիրություն, հին եւ արդի հայ գրականություն, գաղափարներու պատմություն

[Վերա Եագուպեան](#), Քաղաքագէտ, Պէյրոլ (մասնակցութեամբ Խաչիկ Տէր Ղուկասեանի, Պուէնոր Այրես)

[Ժիրայր Մայիսասեան](#), փիլիսոփայ, գրող, Փարիզ

[Վահէ Թաշճեան](#), Պատմաբան, Պէյրոլի Saint-Joseph համալսարանի Հայագիտության դասախօս, Միջին Արեւելքի պատմության մասնագէտ, Յուշամատենի ծրագրի հիմնադիր եւ ղեկավար

[Հրայ Զիլինկիրեան](#), Ընկերաբան, գրող, Սփիւռքի եւ Հայ Եկեղեցւոյ պատմություն եւ արդի մարտահրաւերներ, Լոս Անճելէս - Լոնտոն

[Անգրալ Պաթայնէ](#), Լեզուաբան մանկավարժական մեթոտաբանություն, աշակերտակերպող մանկավարժություն

[Շահան Վիտայ-Կորէն](#), Արիւեստական բանականության եւ Թուային ուսումնասիրության մասնագէտ, *I'Ecole des Chartes*, Փարիզ

[Սարին Քոթիկեան-Օլտէն](#), Մանկավարժ

[Գայիանէ Շագուեան եւ Լեւոն Աբրահամեան](#), Մարդաբանություն, Հայաստանի Հանրապետության Գիտություններու Ակադեմիա

Հայագիտական Միջազգային Մագիստրոսական ծրագիր (IMAS)

IMAS Միջազգային մագիստրոսական ծրագիրը (International MA in Armenian Studies) հայալեզու հեռակա ծրագիր է, որ թույլ կու տայ ձեռք բերել է հետեւեալ գիտելիքներն ու հմտութիւնները՝

- Գիտելիքներ ամբողջացնել եւ խորացնել հայոց աշխարհի (Սփիւռք եւ Հայաստան) լեզուական եւ մշակութային իրողութիւններու եւ խոսոյթներու մասին, իրենց պատմական եւ այժմեական այլազանութեամբ:
- Ասոնց հիման վրայ, անձնական մտածողութիւն կազմել այժմեական հայկական աշխարհի մարտահրաւերներու շուրջ:
- Կարողանալ հայերէն լեզուով աշխատիլ մասնագիտական ոլորտի մէջ (կրթութիւն, մշակոյթ, հաստատութիւններ, լրագրողական, հրատարակչական, մարդասիրական, հոգեւորական, ընկերային կամ գործառական միջավայր): Որոշ դասերու յատկապէս կը միտին նախատեսուած են Սփիւռքի հայկական դպրոցներու ուսուցիչ/ուսուցչուհիներու կատարելագործման համար:
- Կողմնորոշուիլ Սփիւռքի ցանցերուն մէջ եւ կապեր հաստատել հայկական կառոյցներուն հետ:
- Հեռակա աշխատակցի, անդրազգային ցանցի մը մաս կազմել, տիրապետել թուային միջոցներուն նաեւ հայերէնով:
- Հայերէն լեզուով անհատական կամ հաւաքական ծրագիրներ (մշակութային, մանկավարժական, կրթական, ընկերային, մարդասիրական եւայլն) յղանալ եւ գործադրել:
- դասընթացքը կ'աւարտի աշխատանքային միջավայրի մէջ կատարուած փորձաշրջանով, կամ ծրագրի կատարումով (անձնական կամ հաւաքական): Փորձաշրջանը կ'աւարտի հաշուետուութեան գրաւոր աշխատանքով, որ յանձնախումբի մը առջեւ կը պաշտպանուի: Փորձաշրջանին տեղ գրաւոր հետազոտական աշխատանք¹ մը յանձնել կարելի է միայն տուեալ գիտակարգի հետազոտական մեթոտներու պատրաստութիւն ունենալու պարագային, եւ եթէ ծրագրին անձնակազմէն մասնագետ մը համաձայնի աշխատանքը ղեկավարել (դիմումը յանձնելէ առաջ խորհրդակցիլ Ա. Տոնապետեանի հետ):

Շնորհուած վկայականը՝ «Միջազգային Հայագիտութեան Մագիստրոսական աստիճան»ը (« Master international en études arméniennes ») կը համարուի *Master Langues, littératures et civilisations étrangères et régionales (LLCER) Eurasie/Arménien*-ի մէկ տարբերակ.

Թեկնածութիւն եւ արձանագրութիւն

Ծրագիրը տարեկան մինչեւ 15 ուսանող կ'ընդունի: Դասախօսներու անձնակազմը որոշում մը կայացնէ ըստ թեկնածուներուն ներկայացուցած դիմումագիրին եւ ըստ դիմողներու քանակին:

Դիմումներու օրացոյցին եւ հարթակին մասին բոլոր տեղեկութիւնները ամէն տարի կը հրապարակուին ԻՆԱԼԿՕ-ի կայքէջէն՝ <https://www.inalco.fr/candidatures>

Ֆրանսերէնին չտիրապետող ուսանողները որ կը դժուարին համալսարանի հարթակները գործածել, կրնան հայագիտական բաժանմունքի օժանդակ ուսանողին օգնութեան դիմել master.international@etudes-armeniennes.org հասցէին: [Armenian at Inalco](#) եւ [IMAS](#) կայքէջերը Հայերէնով բացատրական տեսահոլովակներ կը տրամադրեն: Արձանագրութեան շրջանին Չում-հանդիպումներ տեղի կ'ունենան:

Դիմումագիրը կը ներառնէ՝

- Թեկնածութեան դիմումագիրը, ֆրանսերէն կամ անգլերէն:
- Դիմողին բարձրագոյն աստիճանի վկայականը, նիշերու եւ դասերու ցուցակով: Փաստաթուղթերը որոնք ոչ ֆրանսերէն, ոչ անգլերէն են, հարկ է պաշտօնական թարգմանութեան հետ միասին ներկայացնել:

¹ Հետազոտական աշխատանքով աւարտած Մաստերի ուսանողները կրնան յետագային տոքթորական ծրագրի (PhD) ընդունուիլ, նուազագոյն նիշ ստանալու պայմանաւ (տե՛սէք [page de l'école doctorale](#)):

- Դրդապատճառները բացատրող նամակ, որ պետք է ներկայացնե՛ք թեկնածուին նկարագիրը, եւ դասընթացքին հետ կապուած իր հետաքրքրութիւնները կամ ակնկալիքները: Այս նամակը նախատեսուած է նաեւ թեկնածուին հայերէն լեզուներով գրաւոր ձեւով յստակօրէն եւ ինքնաբերական արտայայտուելու կարողութիւնը ճշդելու:
- Կենսագրութիւն (CV) (ֆրանսերէն կամ անգլերէն լեզուով):

Նուագագոյն պահանջուած համալսարանական աստիճան

- Licence, Bachelor կամ համարժեք վկայական (bac+3 աստիճան. ֆրանսական Licence-ը կը համապատասխանէ 180 ECTS-ի), բանասիրական, մշակութային կամ ընկերային բնագաւառի մէջ (լեզու, գրականութիւն, ընկերաբանութիւն, լրագրութիւն, կրթութիւն, հրատարակչութիւն, ընկերային աշխատանք, հոգեբանութիւն, աստուածաբանութիւն եւայլն՝ մասնագիտական ծրագրին համապատասխան)

ԿԱՄ

- Որեւէ բնագաւառի Licence կամ Bachelor Ե՛ր դասընթացքին համապատասխանող ասպարեզի մէջ առնուազն 5 տարուայ գործունեութեան փաստ:

ԿԱՄ

- թեկնածուները, որոնք պահանջուած վկայականներու տէրը չեն, սակայն դասընթացքին համապատասխանող բնագաւառի մէջ կրնան նշանակալից գործունեութիւն փաստել, կարելիութիւնը ունին դիմելու [formation continue de l'Inalco](#) գրասենեակին իրենց փորձառութիւնը արժեւորելու համար վկայականի փոխարէն (վճարովի եւ մէկ տարի պահանջող գործողութիւն)

Պահանջուած լեզուական ունակութիւն

- հայերէն (արեւմտահայերէն կամ արեւելահայերէն). լեզուներու եւրոպական դասակարգման C1 սահուն իմացութիւն. թղթածրարին կցել լեզուի ունակութիւնը կամ փորձառութիւնը (դպրոց, բնակավայր, ասպարեզ եւայլն) ցոյց տուող որեւէ փաստաթուղթ: Այլ լեզուի իմացութիւն չի պահանջուիր:

Դիմումագիրը բնեւէ ետք, յանձնաժողովը կրնայ թեկնածուն հրաւիրել հանդիպումի մը լրացուցիչ տեղեկութեան համար, կամ լեզուական ունակութիւնները ստուգելու նպատակով: Հրաւերը կը ղրկուի եւ-մակով:

Ընդունուելու պարագային, ուսանողը նախ պետք է իր թեկնածութիւնը հաստատէ, ետքը կատարէ վարչական արձանագրութիւնը եւ դասերու արձանագրութիւնը:

Բ տարուան (M2) ընդունման համար՝

Մ1 ամբողջութեամբ աւարտելու պարագային, ուսանողը Մ2 անցնելու իրաւունքը կը ստանայ առանց որեւէ դիմում կատարելու (réinscription administrative) :

Այն ուսանողները որոնք այլ վկայական արժեւորելով կը փափաքին անմիջապէս Մ2 մտնել (այլ համալսարանի Մաստեր կամ աւելի բարձր աստիճան, ԻՆԱԼԿՈՅԻ հայերէնի DLC4) կրնան կապուիլ [դասընթացքի պատասխանատու](#)ին հետ դիմումը ներկայացնելէ առաջ:

Արձանագրութեան գործընթացը (Երկու փուլով)

Ընդունման յանձնախումբի դրական պատասխան ստանալէ ետք, ուսանողը արձանագրութիւնը կը կատարէ **Երկու փուլով**, որոնց ֆրանսերէն անունը օգտակար է յիշել՝

- 1) Inscription administrative (IA)՝ « վարչական արձանագրութիւն » եւ տարեկան սակի վճարում, որոնց հիման վրայ կը շնորհուի ուսանողական քարտը:
Ընթացակարգ եւ տարեկան ժամանակացոյց՝ <https://www.inalco.fr/inscriptions-administratives>
Հարցում-պատասխան՝ scolaire@inalco.fr

Վճարումը կատարելէ անմիջապէս ետք, ուսանողները կը ստանան թուային հաշիւ ստեղծելու համար անհրաժեշտ տեղեկութիւնները: Այդ հաշիւը դասերու արձանագրութեան (IP)

հանգրուանին համար անհրաժեշտ է, ինչպես նաև նիշերուն հետեւելու, եւ MOODLE հարթակին միանալու:

- 2) Inscription pédagogique (IP)՝ դասանիւթերու ցանկի հաստատումն է, որ կ'ընդրկէ ընտրովի առարկաներու ընտրութիւնը: Դասերուն հետեւելու եւ քննութիւններու ընդունուելու պայմանն է: Դասերու արձանագրութիւնը (IP) դասերուն սկսելէ առաջ կատարելը անհրաժեշտ է MOODLE հարթակին միանալու համար:

Ուսանողական արձանագրութիւնը ամբողջական կ'ըլլայ միայն այս երկու փուլերէն անցնելէն ետք:

Նկատի առնել՝ *Formation Continue* կարգավիճակը (երբ ուսումը կը վճարուի ուսանողին աշխատատեղիէն) արձանագրութեան այլ պայմաններու եւ այլ սակերու կ'ենթարկուի :

Կապ՝ formation.continue@inalco.fr

Ուսման սակերը եւ վճարման հոլովոյթը կը խնդրուի ԻՆԱԼԿՕ-ի պաշտօնական էջէն ճշդել՝ <https://www.inalco.fr/droits-de-scolarité-tarifs-exonération-annulation-remboursement>

Համալսարան արձանագրուելէ առաջ անհրաժեշտ է պետական CVEC-ն վճարել, <https://cvec.etudiant.gouv.fr/> (տարեկան մէկ անգամ, Նոյնիսկ մէկէն աւելի ծրագրի արձանագրութեան դէպքին)։

Նկարտի առնել՝ 2025-2026-էն ի վեր, Եւրոպական Միութենէն դուրս ապրող ուսանողները կ'ընթարկուին յատուկ սակերու, որոնք 2026-2027-ին Master-ի համար 3950 € է: Բացառութիւններու կամ յատուկ կարգավիճակներու ցանկը հաճեցէ՛ք ստուգել համալսարանի կայքէջէն :

Արձանագրութեան սակերը նաեւ իրաւունք կու տան օգտուելու ամալսարանական ծառայութիւններէն, որոնցմէ BULAC գրադարանէն, պարզ արձանագրութեն մը կատարելէն ետք: <https://www.bulac.fr>

IMAS Մաստերէն ետք ասպարեզի կարելիութիւններ

IMAS Մաստերը հնարաւորութիւններ կը բանայ գործի ասպարեզ մուտք գործելու կամ յառաջանալու, օրինակ հետեւեալ մարզերուն մէջ՝

- Հրատարակչութիւն եւ Մամուլ
- Հաղորդակցութիւն եւ համակարգչային ճարտարարուեստ
- Կրթութիւն (մանկավարժութիւն / վարչութիւն)
- Թարգմանութեան ասպարեզ
- Յատուկ կարիքով անձերու օժանդակութիւն, ընկերային օժանդակութիւն, մարդասիրական ասպարեզ, հոգեբանութիւն, կրօնական բնագաւառ
- Մշակոյթ եւ Ժամանց (ծրագրի ղեկավարում, համայնքային կառոյցներու անձնակազմ)
- Խորհրդատուութիւն եւ փորձագիտութիւն (պետութեան կամ ձեռնարկութիւններու մօտ)
- Ձեռնարկութիւն, Start-up
- Տես նաեւ Ինսերտի կայքէջին ընդհանուր տեղեկութիւնները՝ <https://www.inalco.fr/preparer-son-insertion-professionnelle>

Գործնական տեղեկութիւն

Բաժանմունքի քարտուղարութիւն

Քարտուղարութիւնը կ'արձանագրէ ուսանողին առարկաներու ցանկը: Նաեւ կ'արձանագրէ դասախօսներուն յանձնած նիշերը եւ ուսանողին կիսամեակի վերջի արդիւնքի թերթիկը կը խմբագրէ:

Կապ՝ bureau-master@inalco.fr

IMAS-ի ուսուցման պայմաններ

Ծրագիրը կը դասաւանդուի հայերէն լեզուով (հիմնականօրէն արեւմտահայերէն) եւ ամբողջութեամբ հեռակայ տրամադրելի է (համընթաց կամ տարընթաց - synchronous and asynchronous): Իւրաքանչիւր դասին նիւթերը արձանագրուած ուսանողներուն կը տրամադրուին Ինալքոյի [Moodle](#) հարթակէն): Համընթաց դասերու պարագային, ժամանակացոյցը նախատեսուած է UTC -7էն (Քալիֆորնիա) UTC+4 (Հայաստան) ժամագոտիներուն յարմարելու համար (Փարիզեան ժամով 15:00-20:00):

Վերամուտին ուսանողներուն կը տրամադրուի յատուկ Google օրացոյց մը հայերէն լեզուով եւ բոլոր ժամագոտիներուն յարմարող:

Համալսարանական ժամանակացոյց

Մէկ կիսամեակի դասերը կը համապատասխանեն 12 շաբաթուան: Դասերու, ընդմիջումներու, քննութիւններու եւ վերաքննութիւններու ճշգրիտ թուականները կը սահմանուին ԻՆԱԼԵՕ-ի համալսարանական ժամանակացոյցով, որ հղման պաշտօնական աղբիւրն է՝ <https://www.inalco.fr/calendrier-universitaire>

Արժեւորումը կը կատարուի նախընտրաբար կիսամեակի ընթացքին յանձնուած աշխատանքներուն հիման վրայ, հազուադէպ կիսամեակի վերջի առցանց քննութեամբ: Յունիսին անբաւարար արդիւնք ստացած ուսանողներուն աւելորդ քննութիւններու շրջան մը կ'առաջարկուի:

Ուսանողները կրնան իրենց նիշերուն ծանօթանալ Փետրուարի սկիզբին եւ Մայիսի վերջին, իսկ վերջնական արդիւնքը Յունիսի կեսին յայտնի կը դառնայ: Վկայականներու բաշխումը տեղի կ'ունենայ յաջորդ ուսումնական տարուան ընթացքին, սովորաբար Մարտին, եւ հանդիսութեան մը առիթ կու տայ:

Ժամանակացոյց՝ <https://www.inalco.fr/calendrier-universitaire>

Հայագիտութեան հետ առնչուող կրթաթոշակներ

(Սովորաբար դիմումները կ'ընդունուին գարնանային շրջանին)

Գալուստ Կիւլպէնկեան հաստատութիւն [Fondation Calouste Gulbenkian](#)

ՀԲԸՄ [AGBU / UGAB](#)

Ֆրանսահայ Կապոյտ Խաչ [Croix-Bleue des Arméniens de France](#)

Ըստ անձնական կացութեան կարելի է նաեւ դիմել՝

Աղբատախնամ [Association Arménienne d'aide sociale](#)

Լէա եւ Նափոլէոն Պիլիպեան Հիմնարկ [Bullukian](#) (Լիոն)

Աւելի ամբողջական ցանկ մը կարելի է գտնել [գրկոյկներու փաթեթին](#) 'additional documentation' ենթաժրարին մէջ:

Հանրակացարան

Փարիզի Միջազգային Ոստանը ունի նաեւ Հայ Ուսանողներու Տուն (Մարի Նուպար հիմնարկ) [Maison des Etudiants Arméniens](#), նաեւ նիւթական օժանդակութեան ինդրանքով Մարի Նուպար Հիմնարկի Բարեկամներու ընկերակցութեան:

Գործնական յղումներ

- Հայագիտական բաժանմունքի կայքէջ՝ <https://www.inalco.fr/langues/armenien>
- Դասացուցակ՝ <https://planning.inalco.fr> ուսանողական առցանց սպասարկութիւններու հաշիւը ստեղծելէն ետք (IMAS Inalco Google Calendar հայերէն լեզուով կը տրամադրուի վերամուտէն առաջ)
- Moodle դասանիւթերու հարթակ : <https://moodle.inalco.fr>

- Թուային հարթակ Environnement numérique de travail (ENT) <https://ent.inalco.fr> (ուր քննութիւններէն ետք կարելի է նիշերուն հետեւի)
- Լեզուներու եւ Քաղաքակրթութիւններու գրադարան Bibliothèque universitaire des langues et civilisations (BULAC) <https://www.bulac.fr> (հայկական բաժնի պատասխանատու՝ Ադրինէ Չինալեան)

Դասընթացի կառոյցը

Ծրագիրը երկու ուսումնական տարիէ կը բաղկանայ (Մ1 եւ Մ2), ընդամենը 120 ECTS վարկանիշ (30 իւրաքանչիւր կիսամեակին): Իւրաքանչիւր կիսամեակներ կը բաղկանայ ուսումնական միաւորներէ (UE): Վերջին կիսամեակը նուիրուած է փորձաշրջանին, անհատական/հաւաքական ծրագրին կամ, այն ուսանողներուն համար որոնց արտօնուած է այդ ուղին, հետազօտական աւարտաճառին:

Վերջին կիսամեակին շաբաթական դասեր չկան. ան ամբողջովին նուիրուած է փորձաշրջանին, անձնական/հաւաքական ծրագրին կամ հետազօտական աւարտաճառին՝ հաստատուած ուղիին համաձայն:

2026-2027-ի ադիւսակը կարդալու համար՝

Իւրաքանչիւր UE-ի համար նշուած է պարտադիր կամ ընտրովի դասերուն թիւը:

Վերջին սիւնակին E նշումը կը վերաբերի « ուսուցում » մասնագիտացման դասերուն, որոնք նախատեսուած են հիմնականօրէն Սփիւռքի դպրոցներու ներկայ կամ ապագայ ուսուցիչներուն համար:

Յատուկ պարագայ՝ Նախապէս DLC4 արձանագրուած ուսանողներ

Եթէ Նոյն վերնագրով առարկայի մը քննութիւնը արդէն անցուցած էք, չէք կրնար երկրորդ անգամ այս առարկան ընտրել: IP-ն կատարելու ժամանակ կապուեցէք master.international@etudes-armeniennes.org ձեր Նախկին ձեռքբերումները վաւերացնելու համար:

Master 1		ECTS	Hours per week	
		60/an		
Master 1 — 1-ին կիսամեակ (S7) — 30 ECTS		30		
UE1 – 4 mandatory courses		16		
ARMA416E	Յառաջացած հայերեն 1 (Մ.Գլըճեան)	4	1 h	
ARMA416F	Ընկերալեզուաբանություն եւ արեւմտահայերենի փոխանցում (Ա. Տոնապետեան) <i>Դեր, գաղափարախօսություն, կենսունակություն՝ Ինչպե՞ս փոխանցել արեւմտահայերենը (դպրոցական շրջանակի մեջ եւ այլուր)</i>	4	1,5	
ARMA426C	Հայ գրականություն 1 (Բ. Բատիկեան) <i>Սփիւռքի հայ գրականություն՝ գլխաւոր հարցեր, ազդեցություն, հետքեր</i>	4	1,5	
ARMA426B	Հայ արուեստ (Ա. Լէյլոյեան) <i>Հայ արուեստի պատմություն: Ընդհանուր ակնարկ եւ օրինակներ (ծրագիրը ամեն տարի փոփոխութեան ենթակայ է)</i>	4	1,5	
UE2 - 3 ընտրովի		12		
ARMA426E	Հայ բրիտանիկական՝ եկեղեցի, ընկերություն, քաղաքականություն (Հ. Զիլինկիրեան) <i>Հայոց եկեղեցիներուն կրօնական եւ քաղաքական մարտահրաւերներ Ե. դարէն մինչեւ այսօր: Կրօնական հաստատությունները եւ իրենց ազդեցությունը Հայաստանի եւ Սփիւռքի գաղութներուն վրայ:</i>	4	1,5	
ARMA426F	Յետ-օսմանեան հայեր. աքսոր, մշակութային ժառանգություն եւ վերակառուցում (Վ. Թաշճեան) <i>Օսմանեան կայսրութենէն մինչեւ ազգ-պետություն համակարգ, մարդ, հաստատություն, պատկերացում, գաղափարախօսություն: Պատմական ծագում եւ ժամանակակից մարտահրաւերներ:</i>	4	1,5	
ARMA426G	Արեւմտահայերենի մանկավարժական մարտահրաւերներ (Ա. Ալ- Պաթայնէ) <i>Աշակերտակեդրոն եւ գործօն մանկավարժութեան մարտահրաւերները: Շրջանակ, փորձառություն, քննադատական վերլուծում եւ եզրակացություններ</i>	4	1,5	E
ARMA426H	Անձնական ծրագրի իրագործում (թարգմանություն, հրատարակություն, կայքէջ, աղբիւրներու պատշաճեցում կամ իրագործում): ԿԱՄ	4		
ARMA416D	Գրաբար (յառաջացած աստիճան – միայն ներկայութեամբ)	4	2	
UE3 – Օժանդակ գիտելիքներ եւ մեթոտներ 2 (2 պարտադիր)		2	1,5 h	
ARMA436A	Փորձաշրջանի ընտրություն եւ մեթոդաբանություն (Ա. Տոնապետեան) <i>Ընդհանուր մեթոդագիտություն, անձնական ծրագրի մտայնացում, փորձաշրջանի ընտրություն, աւարտաճառի շարադրություն:</i>		1,5՝ երկու շաբաթը մէկ	
ARMA436B	Համակարգիչ եւ հայագիտություն (Շ.Վիտալ-Կորէն) <i>Հայերէն լեզուով համակարգչային տարրական գործիքներու գործածություն: Համակարգչային հիմնական գիտելիքներ եւ հմտություններ՝ ուղղագրական սրբագրիչ, բառարան, շտեմարաններ, Էսայլն:</i>		1,5	

Master 1		ECTS	Շաբաթական ժամ	
Master 1 — 2-րդ կիսամեակ (S8) — 30 ECTS		30		
UE1 –3 պարտադիր դաս		12	—	
ARMB416E	Յառաջացած հայերեն 2 (Մ.Գլըճեան)	4	1	
ARMB416F	Մամուլի լեզու (Ա. Տոնապետեան)	4	2 - երկու շաբաթը մեկ	
ARMB416G	Հայերենի լեզուաբանական քերականություն (Ա. Տոնապետեան) <i>Տիպաբանություն, քերականական կարգերու ուսումնասիրությամբ հասկնալ արեւմտահայերենի համակարգին յատկությունները եւ իր հետեւանքները գրականության համար եւ լեզուի դասաւանդումին համար:</i>	4	1,5	
UE2 - 4 ընտրովի		16	—	
ARMB426C	Գրական թարգմանության մարտահրաւերները (Ա. Տոնապետեան) <i>Տեսական հիմքեր, բազմալեզու թարգմանության աշխատանոց (անգլերեն, ֆրանսերեն, յունարեն, արաբերեն, ռուսերեն), խմբային աշխատանոց:</i>	4	1	
ARMB426B	Թուրքիոյ Հայ Համայնքը: Ընկերբանություն եւ մարդաբանություն (Ն. Թեմիր-Պէյլերեան)	4	1,5	
ARMB426D	Հայաստան-Սփիւռք՝ աշխարհա-քաղաքական մարտահրաւերներ (Վ. Եագուպեան, Խաչիկ Տէր Ղուկասեանի մասնակցությամբ) <i>Հայաստանի աշխարհա-քաղաքական մարտահրաւերները եւ Հայաստան-Սփիւռք յարաբերությունները, հեռանկարներ եւ արձագանգներ</i>	4	1,5	
ARMB426E	Հայերեն գիրի եւ գիրքի պատմություն (ծեռագիր եւ տպագիր) (Վ. Գալցուլարի) <i>Գրության եւ գրական գործունեության պատմությունը որպէս գաղափարներու եւ հայ ընտրանիներու պատմության արտացոլում (այբուբենի գիտք, դպրություն եւ վանքեր Ե.-ԺԵ. դար, տպագրություն եւ վաճառական քաղաքականություն Ժ2 դարուն, մամուլ, արդի ժամանակի քաղաքական եւ գրական շարժում)</i>	4	1,5	
ARMB426F	Աշակերտակերպման մանկավարժություն արեւմտահայերենի համար (Ա. Ալ-Պաթայնէ) <i>Ծրագիրով սորվիլ (Project Based Learning)՝ վերլուծել կարելիություններն ու խոչընդոտները, աշակերտները ներառել ծրագրի մը շուրջ, առանցնացնել մանկավարժական միաւորներ թիրախ գիտելիքներով եւ հմտություններով, եւ ծրագիրը դասարանէն ներս կիրարկել:</i>	4	1,5	E
UE3 – Օժանդակ գիտելիքներ եւ մեթոտներ (ստորեւ նշուած 2 դասերէն 1-ը ընտրել)		2	—	
ARMB436A	Փորձաշրջան գտնել եւ ծրագիր կազմել (Ա. Տոնապետեան) <i>Սփիւռքի գործիչներու մասնակցությամբ (Միջազգային հիմնարկներէ, մշակութային, քաղաքական, մարդասիրական ոչ-կառավարական կազմակերպություններու, կամ Հայաստան-Սփիւռք յարաբերություններու նուիրում)</i>		6 X 1,5	
ARMB436B	Օտար լեզուի խոհական իւրացում (Ա.Ալ-Պաթայնէ)		1,5	E

	Վերլուծելով սորվողին փորձառությանը եւ դասաւանդողին ընտրությունները			
Master 2		ECTS	Շաբաթական ժամ	
Master 2 — 1-ին կիսամեակ (S9) — 30 ECTS		30		
UE1 – Հիմնական դասեր (ստորեւ նշուած 4 դասերէն 3-ը ընտրել)		13,5	—	
ARMA516E	Յառաջացած հայերէն 3 (Մ. Գլըճեան)	4,5	1	
ARMA516F	Ստեղծագործական շարադրութիւն (Ք. Բատիկեան)	4,5	1	
ARMA516C	Հայ գրականութիւն 2 (Ք. Բատիկեան) <i>Երկու գրական երկերու խորացուած ուսումնասիրութիւն</i>	4,5	1	
ARMA516G	Կորպուսային լեզուաբանութիւն՝ Մարտահրաւերներ եւ կիրարկում (Վ. Խուրշուդեան) <i>Շտեմարան/կորպուս կազմել նուազ տարածուած լեզուի համար՝ լեզուաբանական ճարտարագիտութիւն, կրթութիւն, արհեստական բանականութիւն: Մեթոտա-բանութիւն եւ մօտեցումներ:</i>	4,5	1,5	
UE2 - 3 ընտրովի		13,5	—	
ARMA516C	Հայ գրականութիւն 2 (Ք. Բատիկեան)	4,5	1	
ARMA516G	Կորպուսային լեզուաբանութիւն (Վ. Խուրշուդեան)	4,5	1,5	
ARMA526A	Հայ Սփիւռք՝ հաստատութիւններ, ինքնութիւն եւ մշակոյթ: (Հ. Զիլինկիրեան) <i>Հայկական Սփիւռքը, համայնքներու պատմական եւ ժամանակակից մարտահրաւերներ (քաղաքական, ընկերային, մշակութային) իրենց շրջագիծին մէջ:</i>	4,5	1,5	
ARMA526B	Հայերէն եւ արդիականութիւնը՝ փիլիսոփաներ եւ մտածողներ (Ժ. Մալխասեան) <i>«Որոգայթ փառաց»-էն մինչեւ ժամանակակից մտածողները, հայ մտածողներուն տեղը իրենց շրջանակին եւ ժամանակաշրջանին մէջ:</i>	4,5	1,5	
ARMA526C	Հայերէնի դասաւանդում կիրարկում (Ս. Քոֆթիկեան-Օլտէն) <i>Աշխատանոց դասարանային կամ արտադպրոցական ծրագրի նախապատրաստութեան համար (փորձաշրջանի նախապատրաստութիւն)</i>	4,5	1,5	E
ARMA526E	Ուղղորդուած դիտարկում (ուսուցիչներ՝ ամառնային ճամբար Ա. Կարմիրեանի ղեկավարութեամբ)	4,5	1,5	E
ARMA526F	Հայագիտութեան արդի հարցեր (Գ. Շագոյեան եւ Լ. Աբրահամեան) <i>Մշակութային մարդաբանութիւնն ու հայ հաւաքական յիշողութեան ուսումնասիրութիւնը / Հայ ինքնութեան մասին նոր խոսոյթի մասին</i>	4,5	1,5	
UE3 – Օժանդակ գիտելիքներ եւ մեթոտներ 3 - 1 ընտրովի դաս		3	1,5 h	
ARMA536A	«Թուային մարդկայնականութեան» մեթոտները հայագիտութեան համար (Շ. Վիտալ-Կորէն) <i>Առաջին տարուան դասի խորացում, արհեստական բանականութեան ներածական, Կորպուսային լեզուաբանութեան հետ առնչութիւններ:</i>		1,5	
ARMA536B	Թուային գործիքներ լեզուի դասաւանդման համար (Ալ-Պաթայնէ –Օլտէն)		1,5	E

Master 2 — 2-րդ կիսամեակ (S10)	ECTS	
Կիսամեակ 10 — փորձաշրջան / ծրագիր / աւարտաճառ	30	
IMAB5RPS — Փորձաշրջան եւ փորձաշրջանի հաշուետւութիւն IMAB5MEM — Անձնական ծրագիր (անհատական կամ հաւաքական) կամ Հետազոտական աւարտաճառ	30	
S10 կիսամեակը նուիրուած է մասնագիտական միջավայրի մէջ կատարուելիք փորձաշրջանին, դասախօսներու կազմին կողմէ հաստատուած անհատական կամ հաւաքական ծրագրին, կամ՝ համապատասխան արտօնութիւն ստացած ուսանողներուն պարագային, հետազոտական աւարտաճառի: Փորձաշրջանը կամ ծրագիրը կ'աւարտի հայերէն գրաւոր հաշուետւութեամբ եւ հեռակայ պաշտպանութեամբ: Մանրամասն պայմանները (ժամանակացոյց, փորձաշրջանի տեւողութիւն, ծրագրի հաստատում, յանձնախումբ եւ հետեւում) կը հաղորդուին առաջին տարեշրջանէն սկսեալ: Նաեւ ուսանողներու S10-ի ծրագիրները դասախօսներու կողմէն կը հաստատուին Ա տարուան վերջաւորութեան :		